



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 09 » 09 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0162-21

Ձեռնարկողը՝

« Դ Ը Ն Դ Է Դ Ի Ն Վ Ե Ս Գ Ր ՈՒ Պ » ՍՊ ը նկերություն
ք.Երևան, Գրիբոյեդովի փ.2.1/1/4 փողոց

Գործունեությունը՝

Գյումրիում բնակելի համալիրի կառուցման
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
ք.Գյումրի Գ. Նժդեհ փողոց 9/10

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի՝ պարտականությունները կատարող



Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0162-21

<09> 09 2021թ.

«Դ ԸՆԴ ԷԴ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Գյումրի քաղաքում բնակելի համալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Դ ԸՆԴ ԷԴ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Գ.Նժդեհ փողոց 9/10

Ներածական մաս. Համաձայն ՀՀ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 7-րդ ենթակետի, 1500 ք.մ և բարձր կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի կառույցներն ըստ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության, դասակարգվում են «Գ» կատեգորիայի: Նախագծվող բնակելի համալիրի ընդհանուր հողի մակերեսը կազմում է 12926.0 ք.մ, իսկ կառուցապատման մակերեսը՝ 5772.0 ք.մ է, ուստի սույն նախագիծը և նախատեսվող գործունեությունը պահանջում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նախնական գնահատման հայտի պետական փորձաքննության և փորձագիտական եզրակացության ձեռք բերում:

Բնակելի թաղամասի կառուցման աշխատանքները նախատեսվում է իրականացնել ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Գ. Նժդեհ փողոց 9/10 հասցեում:
Բնակելի համալիրի նախագծային աշխատանքների պատվիրատուն հանդիսանում է Դ ԸՆԴ ԷԴ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն: Նախագիծը մշակվել է ՀՀ գործող շինարարական նորմատիվային պահանջների, Կառուցապատողի և Գյումրու համայնքապետարանի կողմից ներկայացված և նախագծային աշխատանքների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի համաձայն:

Նկարագրական մաս. Գործունեության ենթակա տարածքը գտնվում է ք. Գյումրի Գ. Նժդեհ, Պ Պողոսյան, և Մ.Մկրտչյան փողոցների միջանկյալ հատվածում: Տարածքը նախկինում եղել է



արդյունաբերական տարածք, անմիջապես տարածքի հարևանությամբ Գյումրիի տեքստիլ ֆաբրիկան է: Տարածքին կից հողամասերն են՝ Մ. Մկրտչյան փողոցը, բազմաբնակարան բնակելի շենքեր, առևտրի կենտրոն: Կառուցապատվող հողամասի մակերեսը կազմում է 5772.0 ք.մ, որտեղ առկա են նախկինում արտադրական նպատակով օգտագործված, քանդման ենթակա շենք-շինությունները /գազացակայանի սպասարահ, կոմպրեսորային, մարտկոցային, արհեստանոց/: Ամենամոտ կառուցապատումը նախագծված տարածքից գտնվում է մոտ 25 մ հեռավորության վրա: Նախագծում հաշվի է առնվել հարևան կառույցների շահագործման նորմատիվ պահանջները:

Գյումրի քաղաքի Գ. Նժդեհ փողոց 9/10 հասցեում բնակելի համալիրի նախագծման համար Գյումրիի քաղաքապետարանի կողմից 24.03.2021թ տրվել է N 6. նախագծման թույլտվությունը (ճարտարապետա-հատակագծային առաջադրանք):

Կառուցապատման աշխատանքներն իրականացվելու են բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի և հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատեսքում: Նախագիծը մշակվել է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վկայականով /հ 13042021-08-0042 տրվ. 13.04.2021թ./ ամրագրված հողամասի սահմաններում, որը ղբաղեցնում է 0.1, 1.192609 հա /ընդհանուր՝ 1.1292609հա/ հա մակերես և սեփականության իրավունքով պատկանում է «Դ ԸՆԴ ԷԴ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը:

Քանի որ տարածքը նախկինում ծառայել է արտադրական նպատակով և ամբողջովին կառուցապատված է եղել շենք-շինություններով, բացակայում է հողաբուսական շերտը և տարածքը ներկայացված է հիմնականում լիցքային գրունտներով: Հողամասում, տեղ-տեղ՝ գրունտների հետ հողախառն մասերում հանդիպում են անկանոն աճած՝ մանր և միջին տրամագծերով ծառեր, թփեր, կամ սիզախոտ: Ծառերը հիմնականում հողամասի եզրային մասում են, դրանց մի մասը չորացած են: Ծառերի բների տրամագծերը տատանվում են՝ 5-15 սմ: Գյումրու քաղաքապետարանի համապատասխան մասնագետի հետ համաձայնեցված ճշտվել են ծառերի տեսակները, չորացած ծառերը կհատվեն, իսկ եթե անհրաժեշտ կլինի վերատնկել ծառերը, կենսունակները կտնկվեն կառուցապատվող հողամասի եզրամասում: Գյումրու քաղաքապետարանի կողմից տրվել է թույլտվություն շինարարական աշխատանքներին խոչնդոտող ծառերը հատելու համար, այն պայմանով, որ պահպանվի անվտանգության կանոնները:

Ուսումնասիրվող տեղամասում շինություն կառուցելու համար, որպես հիմնատակ ծառայում են խճային գրունտները և բազալտները:

Համաձայն առաջադրանքի նախագծվել է բնակելի համալիր մեկ ստորգետնյա, հինգ հարկ, և վեցերորդ հետնահանջող վերգետնյա հարկերով: Համալիրը կազմված է տաս մասնաշենքից, որոնք իրարից անջատված են դեֆորմացիոն կարանով:

Համալիրի նկուղային հարկերը նախատեսված է ավտոկայանատեղի՝ թվով 152 ավտոտրանսպորտի համար: Բնակելի համալիրը ունի 12 մուտք, բնակելի մուտքերը նախատեսված է ներքին բակից: Համալիրի Միեր Մկրտչյան փողոցի կողմից առաջին հարկը նախատեսված են հասարակական սպասարկման և գրասենյակային տարածքների համար: Համալիրում նախատեսված է թվով 342 բնակարան՝ մեկ, երկու և երեք ննջարաններով /30.8ք.մ.-120.8ք.մ. մակերեսներով/: Համալիրում նախատեսված է 12 հիմնական աստիճանավանդակ, յուրաքանչյուրում մեկ վերելակ: Նախագծով մշակվել է տարածքի բարեկարգման, կանաչապատման նախագիծ: Կառուցապատման խտության գործակիցը 2.5 է: Հողամասի 35%-ը կանաչապատվելու է, իսկ է 65%-ը համաձայն նախագծման թույլտվության կառուցապատվելու է /ներառյալ՝ սավաճքներ, ճանապարհներ, անջրանցիկ մակերեսներ/:

Նախագծով նախատեսված է արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ նաև հաշմանդամ և բնակչության



սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու պայմաններ: Բնակելի շենքի արտաքին պատերը նախատեսվում է իրականացնել մեկ շարք (200 մմ հաստ.) ամրանավորված պեմզաբլոկներով: Էներգոարդյունավետության և ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների նպատակով բոլոր պատերը արտաքինից կջերմամեկուսացվեն (40 մմ հաստ.) փրփրապոլիստիրոլային ջերմամեկուսիչ սալերով և կերեսպատվեն (40 մմ հաստ.) բազալտե և տրավերտինե սալերով:

Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված է սեյսմիկ - III սեյսմիկ գոտու համար (9 Բալ և ավելի):

Նախագիծը մշակված է համաձայն «Տարածքում գործող հետևյալ նորմատիվային փաստաթղթերի՝

ՀՀՇՆ 30-01-2014 քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում

ՀՀՇՆ 31-01-2014 Բնակելի շենքեր. Մաս1 .Բազմաբնակարան Բնակելի Շենքեր

ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի և Շինությունների Հրդեհային Անվտանգություն

ՀՀՇՆ IV-11.03.03-02 Ավտոկայանատեղեր

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները և ռիսկերը գնահատվում են նախագծվող բազմաբնակարան շենքերի շինարարական աշխատանքների ընթացքում, մասնավորապես, գնահատվում են անօրգանական փոշու և այլ ծխազագերի արտանետումներ, աղմուկի մակարդակի աճ շին-գործողությունների ընթացքում, սակայն նշված ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով նախատեսվող գործունեության տեղամասը:

Ըստ ազդեցության աստիճանի և ինտենսիվության՝ շրջակա միջավայրի վրա բոլոր բացասական ազդեցությունները և ռիսկերը գնահատվում են մինիմալ և կառավարելի գործունեության ընթացքում՝ հաշվի առնելով նախատեսվող շինարարական աշխատանքների ծավալը և բնույթը, ինչպես նաև հեռավորությունը զգայուն ազդակակիրներից:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

- > Օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,
- > Շինարարության փուլում մերձակա բնակչությանը /հարևանությամբ առկա բնակել և հասարակական օբյեկտներ/ պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,
- > Շինարարական մեքենաների և տեխնիկայի պատճառով տեղի երթևեկության խափանում,
- > Հողերի դեգրադացիա և էրոզիա,
- > Հողերի և ջրային ռեսուրսների աղտոտում շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում առաջացող արտահոսքերով,
- > Հողերի աղտոտում՝ շինարարության և շահագործման ընթացքում առաջացող թափոններով, շինարարական և կենցաղային աղբով,
- > Աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ գործունեության իրականացման շինարարության և շահագործման ընթացքում:



Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների և միջոցառումների իրականացման նպատակով, տրամադրվելու է 350.0 հազ.դրամ:

Պարճառարանական մաս. Շինհրապարակում և հարակից տարածքներում մոնիթորինգի իրականացումը հնարավորություն կտա հսկելու շինարարական աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի կամ հարակից տարածքների վրա՝ վնասակար ազդեցությունների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար: Մոնիթորինգի իրականացման հիմնական նպատակն է ստեղծել տեղեկատվություն միջավայրի փոփոխությունների մասին:

Շինհրապարակի համար առաջարկվող մոնիթորինգի միջոցառումները հետևյալն են՝

1. Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ՝ ամիսը երկու անգամ,
2. Շրջակա տարածքների հողային ծածկույթի մոնիթորինգ՝ ամիսը մեկ անգամ,
3. Տեխնիկական միջոցների աշխատանքային վիճակի՝ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
4. Աղմուկի և թրթռումների մակարդակի չափումներ:

Գյումրի համայնքի մթնոլորտային օդում իրականացվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մշտադիտարկումներ քաղաքում գործող 24 դիտակետերում և 1 ստացիոնար դիտակայանում:

Քաղաքի անշարժ դիտակայանում մթնոլորտում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 301 փորձանմուշ: Փոշու միջին տարեկան կոնցենտրացիան չի գերազանցել ՍԹԿ-ն: 2020թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտն աղտոտող 3 նյութերի) միջինից ցածր մակարդակի է, մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը 1.66 է (փոշի՝ 0.56, ծծմբի երկօքսիդ՝ 0.73, ազոտի երկօքսիդ՝ 0.37):

Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է փոշու կոնցենտրացիայի նվազման տենդենց: Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերի պահանջներին: Չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների հիման վրա:

Կառուցապատվող տարածքում տարածված են խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային լիցքային գրունտների ձևով հողերը, որտեղ բուսածածկը և հողածածկը գրեթե բացակայում են և հնարավոր չէ շինարարության ընթացքում բուսաշերտը հանել և պահեստավորել: Ներկայացվող տարածքում հողային ծածկույթն արդեն իսկ խախտված է, նախկինում տեխնաճին ազդեցություններից, քանի որ տարածքն օգտագործվել է արտադրական նպատակով:

Շինարարության ընթացքում մշակման ենթակա գրունտերը պատկանում են III-IV կարգի: Գրունտերի մշակումը փոսորակում և խրամուղիներում իրականացվում է հետ-բահ էքսկավատորով: Հողային աշխատանքների իրականացման ժամանակացույցը 6 ամիս է: Հողային աշխատանքների ժամանակ մշակվող գրունտի ծավալը կկազմի՝ 28000մ³, որից 3000 մ³-ը կօգտագործվի հետլիցքի համար: Ավելացած գրունտի՝ 25.000մ³ ծավալն անմիջապես, առանց պահեստավորման Գյումրիի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կտեղափոխվի հատկացված թափոնավայր: Նախաշինարարական փուլում կիրականացվեն նաև կոմունիկացիաների վերատեղադրման և տեղափոխման աշխատանքները և վերջիններիս միացման աշխատանքները գոյություն ունեցող կոմունիկացիաներին:



Համաձայն կանաչապատման նախագծի՝ ընդհանուր կանաչապատման մակերեսը կազմում է 4527.0 քմ: Մնացածը կկազմի կառուցապատումը, ներառյալ՝ սալվածքները, ճանապարհը և սպասարկման տարածքները: Կանաչապատման համար անհրաժեշտ կլինի նոր բուսահողի ձեռք բերում, որը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Գյումրիի քաղաքապետարանի հետ համաձայնեցված: Կանաչապատումը ներառում է՝ սիզամարզի ծաղիկների տեսքով աշխատանքներ և ծառատունկ:

Բուսատեսակների ընտրությունը պայմանավորված է ոչ միայն վերջիններիս կենսաբանական հատկանիշները հաշվի առնելով, այլև գեղագիտորեն ներդաշնակ միջավայր ստանալու նկատառումներով: Նշված աշխատանքներն իրականացվելու են Գյումրիի քաղաքապետարանի հետ համաձայնեցված, տարածքի համար մշակված կանաչապատման և բարեկարգման նախագծին համապատասխան: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու է եղևնի, ակացիա, հացենի Գիհի և այլ ծառատեսակներ: Այս տեսակները հարմար են Շիրակի մարզի լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին: Տվյալ լանդշաֆտում ծառերի կաչողականությունն ապահովվելու է պարտադիր ոռոգման և խնամքի պայմաններում, որի իրականացման պատասխանատուն հանդիսանում է կառուցապատողը: Կանաչապատվող տարածքների ոռոգումը կապահովվի պահանջվող ջրաքանակին համապատասխան՝ ոռոգման համակարգի ջրի ծախսով: Ոռոգումն իրականացվելու է տարածքի համար նախագծվող ոռոգման ցանցի միջոցով: Նախագծված ոռոգման ցանցը, որը կունենա 200 մ երկարություն, կմիանա տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման համակարգին՝ կնքվելիք պայմանագրին համաձայն:

Բնակելի համալիրի կանաչապատման համար նախատեսված 4.524.0քմ մակերեսում կպահանջվի տնկել 39 հատ ծառեր և 33 հատ թփեր, այդ թվում՝ վարդ, սամշիտ, որը կծառայի որպես տարածքի կենդանի ցանկապատ: Կառուցապատումից ազատ մակերեսում կստեղծվի սիզամարզ, սիզամարզի սալարկ և ծաղկանոց՝ ծաղկասածիլներով: Ամբողջ տարածքի համար կպահանջվի 50 կգ սիզամարզի սերմ:

Փորձաքննական պահանջներ

1. Գյումրիում բնակելի համալիրի կառուցման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15 հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
- 2 Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին»:
3. Ապահովել շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների ձեռք բերումը
4. Հաշվի առնել ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները
5. Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախագրուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ
6. Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում



անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)

7. Անհրաժեշտ է իրականացնել շին հրապարակի պարբերական ջրցանում փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով

8. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և հնարավորինս ծածկել կուտակված նյութերը փոշու տարածումից խուսափելու համար: Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:

9. Շինարարության ավարտից հետո շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն

10. Կատարել կանաչապատման/բարեկարգման աշխատանքներ՝ համաձայն կանաչապատման բարեկարգման նախագծի և պլանների: Ձեռնարկել տնկված թփերի, ծառերի, խոտածածկի պահպանում և մոնիտորինգ բուսականության բարձր աճն ապահովելու համար:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Դ ԸՆԴ ԷԴ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Գյումրու բնակելի համալիրի կառուցման նախագծի, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Շ. Կարապետյան